Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 9

2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղաք Երևան

Մասնակցում էին՝

Ռաֆայել Գևորգյան	Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Լեռնիկ Հարությունյան	ՀՀ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետի տեղակալ
Խորեն Գասպարյան	Կադաստրի կոմիտեի գրանցման վարչություն պետ
Էմմա Պետրոսյան	Արդարադատության նախարարության փորձագետ
Էդուարդ Բաղալյան	«Քաղաքացի-հարկատու-բիզնես» իրավապաշտպան կազմակերպության փոխնախագահ
Ռուբեն Օսիպյան	«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն
Փայլակ Թադևոսյան	«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ
Կարինե Սարգսյան	Ամերիկայի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն
Արմինե Դավթյան	Ամերիկայի առևտրաարդյունաբերական պալատ
Լուսինե Մնացականյան	«ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)

Լուսինե Սարգսյան	Երևանում Բրիտանական դեսպանատան տնտեսական խորհրդատու
Էմիլ Ստեփանյան	Էքսպորտ Արմենիա
Տիգրան Շահբազյան	Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա
Թաթուլ Թամրազյան	Ագբա լիզինգ
Արամ Ղուկասյան	Գլոբալ կրեդիտ ՈՒՎԿ
Գրիգոր Հովհաննիսյան	ԱրմՍվիսս բանկ
Հայկ Հովհաննիսյան	ՓՄՁ ՈՒՎԿ
Արսեն Բազիկյան	«Հայաստանի լիզինգատուների ասոցիացիա» ՀԿ նախագահ
Մարի Խաչատրյան	«Հայաստանի լիզինգատուների ասոցիացիա» ՀԿ նախագահ
Էդգար Պողոսյան	Ամերիաբանկ
Նաիրա Հարությունյան	Ամերիաբանկ
Հովսեփ Պատվականյան	Գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Դավիթ Աղաջանյան	Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ
Իզաբելա Հովհաննիսյան	Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ
Դիանա Հարությունյան	Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ

Թամարա Սարգսյան Էկոնոմիկայի նախարարության Ձեռներեցության զարգացման վարչության խորհրդական

Նիստի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկավ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը:

Նիստի ընթացքում քննարկվեցին՝

Հարց 1. Լիզինգի պայմանագրի կնքման միանվագ միջնորդավճարի ԱԱՀ-ից ազատման առաջարկ:

Հարց 2. Ֆիզիկական անձանց գույքի՝ հետագայում լիզինգով տրամադրման նպատակով օտարումը եկամտային հարկից ազատելու առաջարկ:

Հարց 3. Գույքի որոշ տեսակների (ջերմոցային և սառնարանային տնտեսություններ, սպանդանոցներ, պահեստներ և այլն) կադաստրային գրանցման համար առանձնահատկությունների սահմանման առաջարկ:

«Հայաստանի լիզինգատուների ասոցիացիա» ՀԿ նախագահ Արսեն Բազիկյանի ներկայացմամբ քննարկվեցին լիզինգի կիրառման հետ կապված մի շարք խնդիրներ և ներկայացվեցին դրանց լուծման նպատակով առաջադրված լուծումները, մասնավորապես Լիզինգի պայմանագրի կնքման միանվագ միջնորդավճարի ԱԱՀ-ից ազատման, Ֆիզիկական անձանց գույքի՝ հետագայում լիզինգով տրամադրման նպատակով օտարումը եկամտային հարկից ազատելու, գույքի որոշ տեսակների (ջերմոցային և սառնարանային տնտեսություններ, սպանդանոցներ, պահեստներ և այլն) կադաստրային գրանցման համար առանձնահատկությունների սահմանելու հետ կապված առաջարկները:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

Քննարկվող հարցերի շուրջ վերջնական առաջարկության ձևավորելու նպատակով Էկոնոմիկայի նախարարությունում կազմակերպել ևս մեկ աշխատանքային քննարկում՝ լիզինգային կազմակերպությունների կողմից բարձրացված, ոլորտին առնչվող խնդիրների, մասնավորապես գույքի՝ հետագայում լիզինգով տրամադրման նպատակով օտարման և գույքի որոշ տեսակների կադաստրային գրանցման վերաբերյալ հնարավոր լուծումները քննարկելու նպատակով: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև հանդիպմանը հրավիրել Կադաստրի կոմիտեի, Հայաստանի լիզինգատուների ասոցիացիայի, Բանկերի միության և ՎՋԵԲ ու ՄԹ Կառավարության Լավ կառավարման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող Գործարարության աջակցման գրասենյակի ներկայացուցիչներին:

ՀԱՐՑ 4. 4. 5 տարի և ավելի անընդմեջ գործունեություն չիրականացրած և հարկային պարտավորություններ չունեցող իրավաբանական անձանց համար լուծարման պարզեցված կարգի սահմանման առաջարկ:

Իզաբելա Հովհաննիսյանի զեկուցմամբ ներկայացվեց, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավաբանական անձանց լուծարման ընթացակարգը նախատեսում է որոշակի գործողությունների հերթականություն, ինչպես նաև մասնագիտական գիտելիքներ, որոնց իրականացման համար շատ ընկերություններ չունեն համապատասխան ռեսուրսներ: Փոխարենը վերջիններս գերադասում են հարկային մարմիններին ներկայացվող մեկ դիմումով դադարեցնել իրենց գործունեությունը, առանց հետագայում վերսկսելու մտադրության: Դրա հետևանքով Հայաստանում առկա է ավելի քան 100 հազար գրանցված բիզնես, սակայն ակտիվ է մոտ 70 հազարը: Նման իրավիճակը խեղաթյուրում է վիճակագրությունը և պարբերաբար անհրաժեշտություն է առաջանում օրենքով հարկադիր լուծարում իրականացնելու:

Ներկայացվեց նաև խնդրի կարգավորման միջազգային փորձը, մասնավորապես Լիտվայի, ՌԴ, Ղազախստանի, Միացյալ Թագավորության, Ալբանիայի, Հունգարիայի փորձը:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

Ուսումնասիրել հարցի լուծման օրենսդրական կարգավորման մշակման նպատակահարամարությունն ու ըստ անհրաժեշտության մշակել սահմանված կարգով հարկային մարմնին ներկայացված անորոշ ժամկետով գործունեության դադարեցման մասին հայտարարության հիման վրա սահմանել պարզեցված լուծարման կարգի նախագիծ:

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
(ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)

Վ.ՔԵՐՈԲՅԱՆ